ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ

# ՀՐԱՄԱՆ

Թիվ 3-Լ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՏՐԱԿՏՈՐՆԵՐԻ, ԻՆՔՆԱԳՆԱՑ ՇԱՍՍԻՆԵՐԻ ԵՎ ՏՐԱԿՏՈՐԱՅԻՆ ԿՑԱՆՔՆԵՐԻ, ԻՆՔՆԱԳՆԱՑ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՐՎՈՂ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԿԱՅԱԳՐԻ ՁԵՎԸ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՆ ՀԱՇՎԱՌԵԼՈՒ (ՎԵՐԱՀԱՇՎԱՌԵԼՈՒ, ՀԱՇՎԱՌՈՒՄԻՑ ՀԱՆԵԼՈՒ) ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԴԻՄՈՒՄԻ ՁԵՎԸ, ՏՐԱԿՏՈՐԻՍՏ-ՄԵՔԵՆԱՎԱՐԻ ՎԱՐՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԿԱՅԱԿԱՆ ՍՏԱՆԱԼՈՒ, ՎԱՐՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿԱՐԳԻ ՓՈՓՈԽՄԱՆ, ՎԱՐՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԵՎ ԿՐԿՆՕՐԻՆԱԿԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԴԻՄՈՒՄԻ ՁԵՎԸ, ՏՐԱԿՏՈՐԻՍՏ-ՄԵՔԵՆԱՎԱՐՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԵՎ ՎԱՐՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՏԵՍԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԱՇԱՐԸ, ՏՐԱԿՏՈՐԻՍՏ-ՄԵՔԵՆԱՎԱՐՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԵՎ ՎԱՐՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄՆ ՈՒ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Գյուղատնտեսական տեխնիկայի շահագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի, 5-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ պարբերության, 7-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 24-ի N 307-Ն որոշման հավելվածի 3-րդ կետի և 12-րդ կետի համաձայն.

**Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ ԵՄ՝**

1. Հաստատել

1) Հայաստանի Հանրապետության տարածքում պետական հաշվառման ժամանակ տրակտորների, ինքնագնաց շասսիների և տրակտորային կցանքների, ինքնագնաց

գյուղատնտեսական մեքենաների համար տրվող տեխնիկական վկայագրի ձևը՝ համաձայն հավելված 1-ի,

2) գյուղատնտեսական տեխնիկան հաշվառելու (վերահաշվառելու, հաշվառումից հանելու) համար ներկայացվող դիմումի ձևը՝ համաձայն հավելված 2-ի,

3) տրակտորիստ-մեքենավարի վարման իրավունքի վկայական ստանալու, վարման իրավունքի կարգի փոփոխման, վարման իրավունքի վկայականի փոխանակման և կրկնօրինակի տրամադրման համար ներկայացվող դիմումի ձևը՝ համաձայն հավելված 3-ի,

4) տրակտորիստ-մեքենավարների գիտելիքների ստուգման և վարման իրավունքի վկայականների տրամադրման նպատակով անցկացվող որակավորման տեսական քննության հարցաշարը՝ համաձայն հավելված 4-ի,

5) տրակտորիստ-մեքենավարների գիտելիքների ստուգման և վարման իրավունքի վկայականների տրամադրման որակավորման հանձնաժողովների կանոնադրությունը՝ համաձայն հավելված 5-ի,

6) տրակտորիստ-մեքենավարների գիտելիքների ստուգման և վարման իրավունքի վկայականների տրամադրման որակավորման տարածքային հանձնաժողովների կազմը՝ համաձայն հավելված 6-ի:

2. Հաստատվող տեխնիկական վկայագրի չափսերն են՝ փակված վիճակում 105 X 75 մմ:

3. Հայաստանի Հանրապետության ոստիկանության տնտեսական վարչության պետին՝ ապահովել սույն հրամանի 1-ին կետի 1-ից 4-րդ ենթակետերով նախատեսված ձևաթղթերի տպագրումը:

**ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԴԱՊԵՏ** **Վ.ՕՍԻՊՅԱՆ**

**«19»------07------ 2018թ.**

**ք. Երևան**

Հավելված 1
ՀՀ ոստիկանության պետի
2018թ. հուլիսի 19-ի N 3-Լ հրամանի

**ՁԵՎ**
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՏՐԱԿՏՈՐՆԵՐԻ, ԻՆՔՆԱԳՆԱՑ ՇԱՍՍԻՆԵՐԻ ԵՎ ՏՐԱԿՏՈՐԱՅԻՆ ԿՑԱՆՔՆԵՐԻ, ԻՆՔՆԱԳՆԱՑ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՐՎՈՂ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԿԱՅԱԳՐԻ**

**Դիմերես**

# Տ Ե Խ Ն Ի Կ Ա Կ Ա Ն
# Վ Կ Ա Յ Ա Գ Ի Ր



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԿԱՅԱԳԻՐ

Մեքենայի անվանումը ______________________________

Մակնիշը, տիպարը ______________________________

Արտադրության տարեթիվը ______________________________

Գույնը ______________________________

Շարժիչը ______________________________

(մակնիշը, համարը)

Հզորությունը (Կ.Ն./Ձ.Ու.) ______________________________

Նույնականացման համարը ______________________________

Ամրաշրջանակը № ______________________________

Կառուցվածքային զանգվածը (կգ) ______________________________

Վկայագիրը տրված է ______________________________

______________________________

______________________________

______________________________ հիման վրա:

Տրվել է պետական համարանիշ ______________________________

Կ. Տ.

Գ. № 000000

## REPUBLIC OF ARMENIA
## TECHNICAL CERTIFICATE

Տերը ______________________________

______________________________

Հասցեն ______________________________

______________________________

______________________________

Հաշվառման հասցեն ______________________________

ՃՈ ՀՔ ստորաբաժանման ղեկավար՝

______________________________

ստորագրություն, Ա., Ա., Հ.

«----------» --------------------------------20 ------------թ.

**Կ. Տ.**

Գ. № 000000

Լրացուցիչ տեղեկություններ ___________________________________________

Հավելված 2
ՀՀ ոստիկանության պետի
2018թ. նոյեմբերի 19-ի N 37 հրամանի

**ՁԵՎ**

**ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՆ ՀԱՇՎԱՌԵԼՈՒ (ՎԵՐԱՀԱՇՎԱՌԵԼՈՒ, ՀԱՇՎԱՌՈՒՄԻՑ ՀԱՆԵԼՈՒ) ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԴԻՄՈՒՄԻ**

**Ճանապարհային ոստիկանության ________________ հաշվառման-քննական ստորաբաժանման պետ ____________________________________________ին**

Քաղաքացի (իրավաբանական անձ) ________________________________,
(Ա., Ա., Հ. (իրավաբանական անձի անվանում)

Ծննդյան տարեթիվը ________________, հաշվառման վայրը ______________
____________________________________________________________

Անձնագիր (պետական գրանցման ռեգիստր) ____________________________
(սերիա, համար)

տրված ________________________
(երբ և ում կողմից)

## Դ Ի Մ ՈՒ Մ

**Գյուղատնտեսական տեխնիկայի պետական հաշվառման (վերահաշվառման, հաշվառումից հանելու)**

Խնդրում եմ ____________________________________________________________
(հաշվառել, հաշվառումից հանել, խոտանել, տրամադրել տեխնիկական վկայագրի կրկնօրինակ, տրամադրել նոր պետական համարանիշ)

**Գյուղատնտեսական տեխնիկայի տվյալները**

Մեքենայի տեսակը ______________________________ Մակնիշը ______________________
Արտադրության տարեթիվը ____________________ Շարժիչի համարը ______________________
Գործարանային համարը ____________________________ Հաշվառման համարանիշը ______________
Տեխնիկական վկայագիրը ________________________________________________
(սերիա, համար)

Դիմումին կից ներկայացնում եմ՝ ____________________________________________
____________________________________________________________

«_____» ____________________20__թ. ____________________________________
(ստորագրություն)

- - - - - - - - - - - - - - - - - - - - - - - - - - - - - - - - - - - - - - - -

**ՃՈ հաշվառման-քննական ստորաբաժանման ծառայողի գրանցումները**

Տրվել է պետական համարանիշ ____________________________________________
(սերիա, համար)

Տրվել է տեխնիկական վկայագիր __________________________________________
(սերիա, համար)

«_____» ____________20__թ. **ՃՈ ծառայող** ______________________________
(ստորագրություն, Ա.Ա.Հ.)

Հավելված 3

ՀՀ ոստիկանության պետի
2018թ. հուլիսի 19-ի N 3-Լ հրամանի

**ՁԵՎ**
**ՏՐԱԿՏՈՐԻՍՏ-ՄԵՔԵՆԱՎԱՐԻ ՎԱՐՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԿԱՅԱԿԱՆ ՍՏԱՆԱԼՈՒ, ՎԱՐՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿԱՐԳԻ ՓՈՓՈԽՄԱՆ, ՎԱՐՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԵՎ ԿՐԿՆՕՐԻՆԱԿԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԴԻՄՈՒՄԻ**

**Ճանապարհային ոստիկանության ________________ հաշվառման-քննական ստորաբաժանման պետ ________________________________________ին**

Քաղաքացի__________________________, ծննդյան տարեթիվը ___________
(անուն, ազգանուն, հայրանուն)

Հաշվառման վայրը ______________________________________________

________________________________________________________

Անձնագիր _____________________________ տրված _________________
(սերիա, համար) (երբ և ում կողմից)

## Դ Ի Մ ՈՒ Մ

**Տրակտորիստ-մեքենավարի վարման իրավունքի վկայական ստանալու, վարման իրավունքի կարգի փոփոխման, վարման իրավունքի վկայականի փոխանակման և կրկնօրինակ տրամադրելու**

Խնդրում եմ ________________________________________________
(տրամադրել նորը, փոփոխել կարգը, փոխանակել, տրամադրել կրկնօրինակը)

________________________________________________________

________________________________________________________

Դիմումին կից ներկայացնում եմ

________________________________________________________

________________________________________________________

________________________________________________________

«_____» ___________20__թ. ______________________
(ստորագրություն, Ա.Ա.Հ.)

Հավելված 4
ՀՀ ոստիկանության պետի
2018թ. հուլիսի 19-ի N 3-Լ հրամանի

# ՀԱՐՑԱՇԱՐ

## ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Հետադարձն արգելվում է՝ | Հետիոտնային անցումների վրա: | Թունելներում: | Կամուրջների, ուղեկամուրջների, էստակադների վրա և դրանց տակ: | Երկաթուղային գծանցներում: | Թվարկած բոլոր դեպքերում: |
| 2 | Հետադարձն արգելվում է, եթե ճանապարհի թեկուզ և մեկ ուղղությամբ տեսանելիությունը պակաս է՝ | 100 մ-ից: | 150 մ-ից: | 300 մ-ից: | | |
| 3 | Պարտավո՞ր են արդյոք տրանսպորտային միջոցների վարորդները բնակավայրերում ճանապարհը զիջել՝ կահավորված և նշված կանգառի կետերի տարածքից երթևեկությունը սկսող տրոլեյբուսներին ու ավտոբուսներին: | Այո: | Ոչ: | | | |
| 4 | Հանդիպակաց երթևեկության դեպքում կտրուկ վայրէջքի վրա անհրաժեշտ է ճանապարհը զիջել՝ | Ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցին: | Վերև բարձրացող տրանսպորտային միջոցին: | Ներքև իջնող տրանսպորտային միջոցին: | | |
| 5 | Եթե կարգավորողի ձեռքերը կողմ են պարզված կամ իջեցված են, ապա ոչ ռելսագնաց տրանսպորտային միջոցների երթևեկությունը թույլատրվում է՝ | Թիկունքի և կրծքի կողմից՝ միայն դեպի աջ: | Ձախ և աջ կողմերից՝ ուղիղ և դեպի աջ: | Ձախ և աջ կողմերից՝ միայն ուղիղ: | | |
| 6 | Եթե կարգավորողի աջ ձեռքը պարզված է առաջ, ապա նրա ձախ կողմից ոչ ռելսագնաց տրանսպորտային միջոցների երթևեկությունը թույլատրվում է՝ | Բոլոր ուղղություններով: | Միայն դեպի ձախ: | | | |
| 7 | Եթե կարգավորողի ձեռքերը կողմ են պարզված կամ իջեցված են, ապա նրա ձախ և աջ կողմերից ոչ ռելսագնաց տրանսպորտային միջոցների երթևեկությունը թույլատրվում է՝ | Ուղիղ և դեպի աջ: | Միայն ուղիղ: | | | |
| 8 | Ի՞նչ նշանակություն ունի լուսացույցի կլոր կանաչ թարթող ազդանշանը: | Տեղեկացնում է, որ մուտքը խաչմերուկ արգելվում է: | Թույլատրում է երթևեկությունը և տեղեկացնում, որ դրա գործողության ժամկետը լրանում է և շուտով կմիանա արգելող ազդանշանը: | | | |
| 9 | Եթե կարգավորողի աջ ձեռքը պարզված է առաջ, ապա նրա ձախ կողմից ոչ ռելսագնաց տրանսպորտային միջոցների երթևեկությունը թույլատրվում է՝ | Ուղիղ և դեպի ձախ: | Բոլոր ուղղություններով: | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Եթե երթևեկելի մասը՝ ընդհատվող գծերով բաժանված է գոտիների, ապա այդ գծերը կարելի է հատել: | Միայն վերադասավորվելիս: | Ցանկացած դեպքում: | | | |
| Ինչպե՞ս պետք է վարվի վարորդը՝ մոտենալով խաչմերուկին՝ «Կանգ - գիծ» գծանշման և լուսացույցի կանաչ ազդանշանի պայմաններում: | Կանգ առնի «Կանգ-գծի» մոտ, որից հետո վերսկսի երթևեկությունը: | Շարունակի երթևեկությունը խաչմերուկով՝ առանց կանգառի: | | | |
| Կայանումն արգելվում է՝ | Կամուրջների, էստակադների և ուղեկամուրջների վրա: | Կամուրջների, էստակադների և ուղեկամուրջների տակ: | Թվարկած բոլոր դեպքերում: | | |
| Որպես գնացքի կանգառի ազդանշան ծառայում է՝ | Ձեռքի շրջանաձև շարժումը (ցերեկը՝ վառ գույնի լաթով կամ որևէ լավ տեսանելի առարկայով, գիշերը՝ ջահով կամ լապտերով): | Սկավառակով կամ կարմիր դրոշակով գլխավերև բարձրացված ձեռքը: | Առաջ պարզած ձեռքը: | Վեր և վար ճոճվող՝ առաջ պարզած ձեռքը: | |
| «Կանգ» գծից կամ «Երթևեկությունն առանց կանգառի արգելվում է» նշանից ի՞նչ հեռավորության վրա պետք է կանգնեցվի տրանսպորտային միջոցը՝ մոտեցող գնացքին ճանապարհը զիջելու համար: | 1,5 մ: | 2,5 մ: | 5 մ: | 10 մ: | Անմիջապես «Կանգ» գծի և (կամ) նշանի մոտ: |
| Որտե՞ղ է թույլատրվում երկարատև հանգստի, գիշերակացի և այլ նպատակներով կայանելը բնակավայրերից դուրս: | Ճանապարհի կողնակներին: | Կայանման համար նախատեսված հրապարակներում կամ ճանապարհի սահմաններից դուրս: | Ճանապարհի երթևեկելի մասի աջ կողմում՝ չխոչընդոտելով այլ տրանսպորտային միջոցների երթևեկությունը: | Ճանապարհի ձախ կողմում՝ ապահովելով ճանապարհային երթևեկության անվտանգությունը: | |
| Եթե երկաթուղային գծանցով երթևեկությունը արգելված է և բացակայում են լուսացույցը, ճանապարհային նշանները, գծանշումն ու ուղեփակոցը, ապա վարորդը պետք է կանգնի՝ | Մոտակա ռելսից ոչ պակաս, քան 5 մ հեռավորության վրա: | Մոտակա ռելսից ոչ պակաս, քան 7 մ հեռավորության վրա: | Մոտակա ռելսից ոչ պակաս, քան 10 մ հեռավորության վրա: | | |
| Ի՞նչ հեռավորության վրա է արգելվում տրանսպորտային միջոցների կայանումը երկաթուղային գծանցներից՝ | 15 մ: | 50 մ: | 100 մ: | 150 մ: | |
| Եթե երկաթուղային գծանցով երթևեկությունն արգելված է և բացակայում են լուսացույցը, ճանապարհային նշաններն ու գծանշումը, ապա վարորդը պետք է կանգնի՝ | Ուղեփակոցից ոչ պակաս, քան 5 մ հեռավորության վրա: | Ուղեփակոցից ոչ պակաս, քան 3 մ հեռավորության վրա: | Ուղեփակոցից անմիջապես առաջ: | | |
| Կոշտ կցիչով քարշակման ժամանակ հեռավորությունը տրանսպորտային միջոցների միջև չպետք է գերազանցի՝ | 2 մ: | 3 մ: | 4 մ: | 5 մ: | 6 մ: |
| Թույլատրվու՞մ է արդյոք կոշտ կամ ճկուն կցիչով քարշակման ժամանակ մարդկանց փոխադրումը բեռնատար ավտոմոբիլի թափքում՝ | Թույլատրվում է քարշակող և քարշակվող ավտոմոբիլների թափքում: | Թույլատրվում է միայն քարշակվող ավտոմոբիլի թափքում: | Թույլատրվում է միայն քարշակող ավտոմոբիլի թափքում: | Երկու ավտոմոբիլների թափքում էլ արգելվում է: | |
| Մեխանիկական տրանսպորտային միջոցներ քարշակելիս երթևեկության արագությունը չպետք է գերազանցի՝ | 30 կմ/ժ: | 40 կմ/ժ: | 50 կմ/ժ: | 60 կմ/ժ: | 70 կմ/ժ: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Ի՞նչ առավելագույն արագությամբ է թույլատրվում երթևեկությունը ճկուն կցիչով քարշակելիս: | 70 կմ/ժ: | 60 կմ/ժ: | 50 կմ/ժ: | 40 կմ/ժ: | 30 կմ/ժ: |
| Տրանսպորտային միջոցի վրա բեռը տեղաբաշխվում և անհրաժեշտության դեպքում նաև ամրացվում է այնպես, որպեսզի՝ | Չցցվի հարթակի կողերից բարձր: | Զգալի աղմուկ չհանի, փոշի չբարձրացնի կամ չաղտոտի ճանապարհն ու շրջակա միջավայրը: | Դուրս չցցվի տրանսպորտային միջոցի հետևի եզրաչափից 0,8 մ-ից ավելի: | | |
| Թույլատրվու՞մ է արդյոք մարդկանց փոխադրումը բեռնատար կցորդում: | Արգելվում է: | Թույլատրվում է: | Թույլատրվում է՝ միայն բեռն ուղեկցող անձանց: | | |
| Մարդկանց փոխադրումը բեռնատար կցորդում՝ | Արգելվում է: | Թույլատրվում է: | Թույլատրվում է միայն բեռն ուղեկցող անձանց: | | |
| Ո՞ր դեպքում կանոնները չեն պարտադրում տալ նախազգուշացնող ազդանշան: | Երթևեկելի մասի եզրին կանգառ կատարելիս: | «Վտանգավոր շրջադարձ» նշանի ազդեցության ճանապարհի կորացումից առաջ: | Երթևեկության հարևան գոտի վերադասավորվելուց առաջ: | | |
| Վերադասավորումից առաջ նախազգուշացնող ազդանշանը պետք է տրվի՝ | Անմիջապես մանևրն սկսելուց առաջ: | Անմիջապես մանևրն սկսելուց հետո: | Նախօրոք՝ մինչև մանևրն սկսելը: | | |
| Մանևրը կատարելուց առաջ նախազգուշացնող ազդանշանը պետք տրվի՝ | Մանևրն սկսելուց անմիջապես առաջ: | Մանևրն սկսելու հետ միաժամանակ: | Նախօրոք՝ մինչև մանևրն սկսելը: | | |
| Վարորդի կողմից ձեռքով տրվող նախազգուշացնող ազդանշանը դադարեցվում է՝ | Մանևրն սկսելուց անմիջապես առաջ: | Մանևրն ավարտելուց անմիջապես հետո: | Մանևրը կատարելու ժամանակ: | | |
| Ո՞ր դեպքում վարորդը պետք է տա նախազգուշացնող ազդանշան՝ կանգառ կատարելուց առաջ: | Եթե նրա հետևից երթևեկում է այլ տրանսպորտային միջոց: | Միայն բնակավայրերում: | Բոլոր դեպքերում: | | |
| Ձայնային ազդանշանների կրկնողությամբ ընդհանուր տագնապի ինչպիսի՞ ազդանշան է վարորդը պարտավոր տալ երկաթուղային գծանցի վրա հարկադրական կանգառ կատարելու դեպքում: | Երեք երկար և մեկ կարճ: | Մեկ երկար և երեք կարճ: | Մեկ երկար և երկու կարճ: | | |
| Երկաթուղային գծանցի վրա տրվող ընդհանուր տագնապի ազդանշան է հանդիսանում ձայնային ազդանշանների հետևյալ համակցությունը՝ | Երկու երկար և երկու կարճ: | Մեկ երկար և երեք կարճ: | Երեք երկար և երեք կարճ: | Երեք երկար և մեկ կարճ: | |
| Կարմիր գույնի առկայծող փարոսիկ, միացրած, կանգնած վիճակում գտնվող տրանսպորտային միջոցին մոտենալիս՝ տվյալ ուղղությամբ երթևեկող տրանսպորտային միջոցների վարորդները պետք է՝ | Կանգ առնեն և շարունակեն երթևեկթյունը միայն թույլտվություն ստանալուց հետո: | Իջեցնեն արագությունը, որպեսզի անհրաժեշտության դեպքում հնարավորություն ունենան անմիջապես կանգ առնել: | | | |
| Տրանսպորտային միջոցների վրա ի՞նչ նպատակով են տեղադրված նարնջագույն կամ դեղին գույնի առկայծող փարոսիկներ: | Երթևեկության մյուս մասնակիցների նկատմամբ երթևեկության առավելություն ստանալու համար: | Երթևեկության մյուս մասնակիցներին վտանգի մասին նախազգուշացնելու համար: | | | |
| Կապույտ գույնի առկայծող փարոսիկ և հատուկ ձայնային ազդանշան միացրած տրանսպորտային միջոց մոտենալու դեպքում վարորդները պետք է՝ | Զիջեն ճանապարհը՝ նշված տրանսպորտային միջոցի անխոչընդոտ անցումն ապահովելու համար: | Իջեցնեն արագությունը և զիջեն ճանապարհը՝ նշված տրանսպորտային միջոցի անխոչընդոտ անցումն ապահովելու համար: | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Կապույտ և կարմիր գույների առկայծող փարոսիկներ և հատուկ ձայնային ազդանշան միացրած տրանսպորտային միջոց մոտենալու դեպքում վարորդները պետք է՝ | Զիջեն ճանապարհը՝ նշված տրանսպորտային միջոցի անխոչընդոտ անցումն ապահովելու համար: | Իջեցնեն արագությունը և զիջեն ճանապարհը՝ նշված, ինչպես նաև դրանով ուղեկցվող տրանսպորտային միջոցների անխոչընդոտ անցումն ապահովելու համար: | | | |
| Տալի՞ս է արդյոք երթևեկության առավելություն տրանսպորտային միջոցի վրա միացված դեղին գույնի (նարնջագույն) առկայծող փարոսիկը: | Տալիս է: | Չի տալիս: | | | |
| Ի՞նչ տարածության վրա է արգելվում վազանցը մինչև երկաթուղային գծանցը: | Մինչև 50 մ առաջ: | Մինչև 100 մ առաջ: | Մինչև 150 մ առաջ: | | |
| Վազանցն արգելվում է՝ | Խաչմերուկներում: | Երկաթուղային գծանցներից 150 մ առաջ: | Երկու դեպքում էլ: | | |
| Վազանցն արգելվում է՝ | Կարգավորվող խաչմերուկներում: | Չկարգավորվող խաչմերուկներում: | Երկու դեպքում էլ: | | |
| Օրվա մութ ժամանակ և անբավարար տեսանելիության պայմաններում՝ անկախ ճանապարհի լուսավորվածությունից, երթևեկող մեխանիկական տրանսպորտային միջոցների վրա պետք է միացված լինեն՝ | Լապտերների հեռահար լույսը: | Լապտերների մոտակա լույսը: | Լապտերների հեռահար կամ մոտակա լույսը: | | |
| Առաջնահերթ ի՞նչ պետք է ձեռնարկի վարորդը հանդիպակաց երթևեկող տրանսպորտային միջոցի լապտերների լույսից շլանալու դեպքում: | Լապտերների հեռահար լույսը (միացված լինելու դեպքում) փոխարկի մոտակայի: | Միացնի վթարային լուսային ազդանշանը: | Տա ձայնային ազդանշան՝ մեկ երկար և երեք կարճ: | Տա ձայնային ազդանշան՝ մեկ կարճ և երեք երկար: | |
| Ձայնային ազդանշանները կարող են կիրառվել միայն՝ | Բնակավայրերում՝ վազանց կատարելու մտադրության մասին մյուս վարորդներին նախազգուշացնելու համար: | Երբ դա անհրաժեշտ է ճանապարհատրանսպորտային պատահարը կանխելու համար: | Երկու դեպքում էլ: | | |
| Օրվա մութ ժամանակ ճանապարհի չլուսավորված հատվածներում երթևեկող մեխանիկական տրանսպորտային միջոցի վրա պետք է միացված լինի՝ | Լապտերների հեռահար կամ մոտակա լույսը: | Լապտերների միայն մոտակա լույսը: | Լապտերների միայն հեռահար լույսը: | | |
| Հանդիպակաց երթևեկող տրանսպորտային միջոցից ի՞նչ հեռավորության վրա լապտերների հեռահար լույսը պետք է փոխարկվի մոտակայի: | 100 մ-ից ոչ պակաս: | 150 մ-ից ոչ պակաս: | 300 մ-ից ոչ պակաս: | | |
| Թույլատրվու՞մ է արդյոք երկաթուղային գծանցով փոխադրել գյուղատնտեսական, ճանապարհային, շինարարական և այլ մեքենաներ ու մեխանիզմներ: | Թույլատրվում է, եթե գծանցը կահավորված չէ ուղեփակոցով: | Թույլատրվում է, եթե դրանք գտնվում են ոչ տրանսպորտային վիճակում: | Թույլատրվում է, եթե դրանք գտնվում են տրանսպորտային վիճակում: | | |
| Որտե՞ղ է թույլատրվում հատել երկաթուղային գծերը: | Այն տեղերում, որտեղ երկու կողմից տեսանելիությունը կազմում է առնվազն 1000 մ: | Վարորդի հայեցողությամբ՝ դրա համար առավել հարմարավետ տեղերում: | Դրա համար նախատեսված տեղերում: | Երկաթուղային կայարաններից առնվազն 1000 մ հեռավորության վրա: | |
| Թույլատրվու՞մ է արդյոք ծառայողական առաջադրանք կատարելիս ինքնակամ բացել կամ շրջանցել ուղեփակոցը: | Արգելվում է: | Թույլատրվում է: | Թույլատրվում է՝ վարորդի հայեցողությամբ, եթե մոտակայքում բացակայում է մոտեցող գնացքը: | Թույլատրվում է՝ գծանցի հերթապահի բացակայության դեպքում: | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Թույլատրվու՞մ է արդյոք երկաթուղային գծանցով փոխադրել գյուղատնտեսական, ճանապարհային, շինարարական և այլ մեքենաներ ու մեխանիզմներ: | Թույլատրվում է: | Թույլատրվում է, եթե դրանք գտնվում են տրանսպորտային վիճակում: | Արգելվում է: | | |
| Ինչո՞վ պետք է ղեկավարվի վարորդը երկաթուղային գծանցին մոտենալիս: | Ուղեփակոցի դիրքով և լուսացույցի ազդանշաններով: | Ճանապարհային նշանների և գծանշումների պահանջներով: | Գծանցի հերթապահի ցուցումներով: | Բոլոր թվարկած պահանջներով: | |
| Խաչմերուկը համարվում է կարգավորվող, եթե երթևեկության հերթականությունը որոշվում է՝ | Միայն լուսացույցի ազդանշաններով: | Միայն կարգավորողի ազդանշաններով: | Լուսացույցի և կարգավորողի ազդանշաններով: | | |
| Ի՞նչ արագությամբ է թույլատրվում տրանսպորտային միջոցների երթևեկությունը «Բնակելի գոտի» և «Բնակելի գոտու վերջ» ճանապարհային նշանների ազդեցության տարածքներում: | 5 կմ/ժ ոչ ավելի: | 10 կմ/ժ ոչ ավելի: | 20 կմ/ժ ոչ ավելի: | | |
| Թույլատրվու՞մ է արդյոք վարորդին շարունակել երթևեկությունը լուսացույցի դեղին ազդանշանը միանալու կամ կարգավորողը ձեռքը բարձրացնելու դեպքում: | Արգելվում է: | Թույլատրվում է, եթե վարորդը հնարավորություն չունի կանգնել՝ առանց կտրուկ արգելակման: | | | |

Հավելված N 5
ՀՀ ոստիկանության պետի
2018թ. հուլիսի 19-ի N 3-Լ հրամանի

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
# ՏՐԱԿՏՈՐԻՍՏ-ՄԵՔԵՆԱՎԱՐՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԵՎ ՎԱՐՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ

## I. Ընդհանուր դրույթներ

1. Տրակտորիստ-մեքենավարի գիտելիքների ստուգման և վարման իրավունքի վկայականի տրամադրման որակավորման հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով) ստեղծվում և նրա գործունեությունը դադարեցվում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի հրամանով:

2. Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ:

## II. Հանձնաժողովի խնդիրները և գործունեության կազմակերպումը

3. Հանձնաժողովը ստուգում է տրակտորիստ-մեքենավարի վկայական ստանալու համար դիմողների տեսական և գործնական գիտելիքները:

4. Հանձնաժողովի կազմում ընդգրկվում է երկու անդամ՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությունից (այսուհետ՝ Ճանապարհային ոստիկանություն), մյուսը՝ տրակտորիստ-մեքենավարի դասընթացներ կազմակերպող պետական ոչ առևտրային կազմակերպություն հանդիսացող ուսումնական հաստատությունից: Ճանապարհային ոստիկանության ներկայացուցիչը հանդիսանում է հանձնաժողովի նախագահը:

5. Հանձնաժողովի նիստերն իրավազոր են, եթե դրանց մասնակցում են հանձնաժողովի բոլոր անդամները:

6. Մասնագիտական գիտելիքների ստուգման և որակավորման (այսուհետ՝ որակավորման) քննությունն անցկացվում է դիմումատուի կողմից օրենքով սահմանված փաստաթղթերը Ճանապարհային ոստիկանության ծառայողին ներկայացնելու օրվանից ոչ ուշ, քան 15 օր հետո և ոչ շուտ, քան 10 օր հետո: Քննության անցկացման վայրի, ամսաթվի և ժամի մասին հանձնաժողովի անդամներին տեղեկացնում է Ճանապարհային ոստիկանության ծառայողը որակավորման քննության օրվանից առնվազն երեք աշխատանքային օր առաջ:

7. Հանձնաժողովն որակավորման քննությունն անցկացնում է երկու փուլով՝ տեսական քննություն և գործնական քննություն, նույն օրվա ընթացքում:

8. Հանձնաժողովը տեսական քննությունն անցկացնում է տրակտորիստ-մեքենավարների վարման իրավունքի առաջին, երկրորդ և երրորդ կարգի համար հաստատված հարցաշարից թեստավորման սկզբունքով կազմված հարցաթերթիկների միջոցով, որոնցում ընդգրկում են հնգական հարց գյուղատնտեսական տեխնիկայի շահագործման և ճանապարհային երթևեկության կանոններից:

9. Հանձնաժողովը գործնական քննությունն անցկացնում է տեսական քննության արդյունքների ամփոփումից հետո, որին մասնակցում են տեսական քննությունը դրական հանձնած դիմումատուները:

10. Որակավորման քննության ավարտից հետո հանձնաժողովն ամփոփում է արդյունքները և նույն օրը տալիս է տրակտորիստ-մեքենավարի վարման իրավունքի վկայական տրամադրելու համար քննության արդյունքների մասին եզրակացություն՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 24-ի N 307-Ն որոշմամբ հաստատված N 1 Ձևի, որն ստորագրվում է հանձնաժողովի նախագահի և հանձնաժողովի անդամների կողմից: Այն կազմվում է երեք օրինակից, որոնցից մեկը պահվում է Ճանապարհային ոստիկանության ծառայողի մոտ, մյուսը՝ նույն օրը տրվում է դիմումատուին, իսկ երրորդը՝ հանձնաժողովի նախագահը երկու աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է Ճանապարհային ոստիկանության պետին:

11. Տեսական կամ գործնական քննության արդյունքների մասին հանձնաժողովի բացասական որոշման դեպքում՝ հանձնաժողովը կազմում է բացասական եզրակացություն:

## III. Հանձնաժողովի նախագահը

12. Հանձնաժողովի նախագահը՝

1) վարում է հանձնաժողովի նիստը, կազմակերպում է հանձնաժողովի աշխատանքները,

2) վերահսկում է քննական հարցաթերթիկների կազմման և օգտագործման աշխատանքները,

3) բարձրաձայն հայտարարում է պատասխանի ճիշտ կամ սխալ լինելու մասին, սխալ պատասխանի դեպքում՝ բարձրաձայնում է ճիշտ պատասխանը,

4) ամփոփում և հրապարակում է քննության արդյունքները:

## IV Հանձնաժողովի աշխատանքի ամփոփումը

13. Հանձնաժողովի կողմից լրացված և ստորագրված եզրակացությունները քննությանը մասնակցած դիմումատուներին տրամադրելուց հետո, հանձնաժողովի աշխատանքները համարվում են ավարտված:

14. Հանձնաժողովի կողմից քննության արդյունքների հիման վրա ընդունված որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հավելված
ՀՀ ոստիկանության պետի
2022թ. Հուլիսի 20 -ի N 15-Լ հրամանի
Հավելված 6
ՀՀ ոստիկանության պետի
2018թ. հուլիսի 19-ի N 3-Լ հրամանի

# ԿԱԶՄ
# ՏՐԱԿՏՈՐԻՍՏ-ՄԵՔԵՆԱՎԱՐՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԵՎ ՎԱՐՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ

| Տարածքը | Գերատեսչության անվանումը | Անուն, հայրանուն, ազգանուն | Զբաղեցրած պաշտոնը | Բջջային հեռախոս |
|---|---|---|---|---|
| Երևան | Երևանի ՀՔԲ | Ջումշուդ Սահակի Խաչատրյան | Երևանի ՀՔԲ ավագ տեսուչ, ոստ.մայոր | 077-02-07-01 |
| | | փոխարինող՝ Գուրգեն Գևորգի Ավագյան | Երևանի ՀՔԲ տեսուչ, ոստ.մայոր | 098-26-20-02 |
| | Հանրապետական N2 հատուկ կրթահամալիր | Ալեքսանդր Էդուարդի Գրիգորյան | «Տրակտորիստ-մեքենավար» մասնագիտության ուսուցիչ | 093-53-75-59 |
| | «Էջմիածնի արհեստագործական պետական ուսումնարան» | փոխարինող՝ Արամ Արսենի Ալիխանյան | Արտադրական ուսուցման վարպետ, մասնագիտական առարկաների ուսուցիչ | 055-31-68-18<br>077-31-68-18 |
| Կոտայքի մարզ | Կոտայքի ՀՔԲ | Արտյոմ Սերգեյի Հակոբյան | Կոտայքի ՀՔԲ ավագ տեսուչ, ոստ.մայոր | 093-72-07-00 |
| | | փոխարինող՝ Հովհաննես Հենրիկի Մկրտչյան | Կոտայքի ՀՔԲ տեսուչ, ոստ.կապիտան | 077-66-00-42 |
| | «Սևանի բազմագործառութային պետական քոլեջ» | Գևորգ Սերյոժայի Ստեփանյան | Արտադրական ուսուցման վարպետ | 091-34-58-49 |
| | «Արագածի արհեստագործական պետական ուսումնարան» | փոխարինող՝ Միշա Աբգարի Իսրայելյան | մանկավարժ | 093-14-05-54 |
| Արմավիրի մարզ | Արմավիրի ՀՔԲ | Մամիկոն Նորիկի Սարգսյան | Արմավիրի ՀՔԲ ավագ տեսուչ, ոստ. կապիտան | 077-24-42-77 |
| | | փոխարինող՝ Սլավիկ Սայադի Կարապետյան | Արմավիրի ՀՔԲ ավագ տեսուչ, ոստ. մայոր | 091-03-78-00 |
| | «Էջմիածնի արհեստագործական պետական ուսումնարան» | Արամ Արսենի Ալիխանյան | Արտադրական ուսուցման վարպետ, մասնագիտական առարկաների ուսուցիչ | 055-31-68-18<br>077-31-68-18 |
| | Հանրապետական N2 հատուկ կրթահամալիր | փոխարինող՝ Ալեքսանդր Էդուարդի Գրիգորյան | ուսուցիչ | 094-37-59-69 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Արարատի մարզ | Արտաշատի ՀՔԲ | Արթուր Սմբատի Ավետիսյան | Արտաշատի ՀՔԲ տեսուչ, ոստ. ավագ լեյտենանտ | 098-84-84-64 |
| | | փոխարինող՝ Ավետիք Հակոբի Մաղոյան | Արտաշատի ՀՔԲ տեսուչ, ոստ. կապիտան | 077-58-58-78 |
| | «Էջմիածնի արհեստագործական պետական ուսումնարան» | Արամ Արսենի Ալիխանյան | Արտադրական ուսուցման վարպետ, մասնագիտական առարկաների ուսուցիչ | 055-31-68-18<br>077-31-68-18 |
| | Հանրապետական N2 հատուկ կրթահամալիր | փոխարինող՝ Ալեքսանդր Էդուարդի Գրիգորյան | «Տրակտորիստ-մեքենավար» մասնագիտության ուսուցիչ | 093-53-75-59 |
| Շիրակի մարզ | Հյուսիսային գրանցման-հաշվառման և քննական կենտրոն | Անուշավան Լյովայի Սարոյան | Հյուսիսային գրանցման-հաշվառման և քննական կենտրոնի ավագ տեսուչ, ոստ.մայոր | 077-31-32-33 |
| | | փոխարինող՝ Հովհաննես Հմայակի Մկրտչյան | Հյուսիսային գրանցման-հաշվառման և քննական կենտրոնի ավագ տեսուչ, ոստ.մայոր | 093-40-17-17 |
| | «Արագածի արհեստագործական պետական ուսումնարան» | Գևորգ Արտավազդի Ավետիսյան | «Տրանսպորտային միջոցների շահագործում և նորոգում» մասնագիտական խմբի վարպետ | 094-60-38-89 |
| | «Արագածոտնի տարածաշրջանային պետական քոլեջ» | փոխարինող՝ Վալերիկ Միշայի Կարապետյան | «Տրանսպորտային միջոցների շահագործում և նորոգում» մասնագիտական խմբի վարպետ | 98-93-19-62 |
| Արագածոտնի մարզ | Աշտարակի ՀՔԲ | Կարապետ Մնացականի Հովհաննիսյան | Աշտարակի ՀՔԲ ավագ տեսուչ, ոստ.մայոր | 098-54-01-01 |
| | | փոխարինող՝ Հայկազ Հակոբի Սարոյան | Աշտարակի ՀՔԲ տեսուչ, ոստ.կապիտան | 055-00-00-98 |
| | «Արագածի արհեստագործական պետական ուսումնարան» | Գևորգ Արտավազդի Ավետիսյան | «Տրանսպորտային միջոցների շահագործում և նորոգում» մասնագիտական խմբի վարպետ | 094-60-38-89 |
| | «Արագածոտնի տարածաշրջանային պետական քոլեջ» | փոխարինող՝ Խաչիկ Վրեժի Հակոբյան | փոխտնօրեն ուսումնական գծով | 093-00-51-03 |
| Լոռու մարզ | Վանաձորի ՀՔԲ | Կարեն Հովիկի Հարությունյան | Վանաձորի ՀՔԲ ավագ տեսուչ, ոստ.մայոր | 098-03-66-33 |
| | | փոխարինող՝ Կարեն Հովիկի Մարտիրոսյան | Վանաձորի ՀՔԲ ավագ տեսուչ, ոստ.մայոր | 098-00-70-03 |
| | «Վանաձորի պետական գյուղատնտեսական քոլեջ» | Կարեն Վոլոդյայի Պետրոսյան | Արտադրական ուսուցման վարպետ | 093-62-69-35 |
| | «Ալավերդու արհեստագործական պետական ուսումնարան» | փոխարինող՝ Կարո Կարլենի Սայադյան | «Գյուղատնտեսական աշխատանքների տեխնիկական ապահովում» մասնագիտության վարպետ | 094-64-22-07 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | «Ստեփանավանի պրոֆ. Ա. Քալանթարի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» | փոխարինող՝ Հակոբ Վազգենի Դավիթավյան | դասախոս | 098-30-30-24 hakobdavitavyan15@gmail.ru |
| Սյունիքի մարզ | Կապանի ՀՔԲ | Արման Արտոյի Քալաշյան | Կապանի ՀՔԲ ավագ տեսուչ, ոստ.մայոր | 093-04-04-00 |
| | | փոխարինող՝ Գևորգ Արամայիսի Ստեփանյան | Կապանի ՀՔԲ տեսուչ, ոստ.կապիտան | 098-09-90-77 |
| | «Գորիսի պրոֆ. Խ. Երիցյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» | Սեյրան Մարտունի Հովհաննիսյան | Գյուղատնտեսության մեքենայացման մասնագիտական և տեխնիկական առարկաների ու մոդուլների ամբիոնի դասախոս | 094-02-26-97 |
| | «Գորիսի պրոֆ. Խ. Երիցյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» | փոխարինող՝ Համլետ Սարգսի Բաբաջանյան | Գյուղատնտեսության մեքենայացման մասնա-գիտական և տեխնիկական առարկաների ու մոդուլների ամբիոնի վարիչ, նույն ամբիոնի դասախոս | 077-27-06-70 |
| | Գորիսի ՀՔԽ | Մարգար Գեղամի Մարգարյան | Գորիսի ՀՔԽ ավագ տեսուչ, ոստ.մայոր | 094-60-99-09 |
| | | փոխարինող՝ Վոլոդյա Հակոբի Հակոբյան | Գորիսի ՀՔԽ տեսուչ, ոստ. լեյտենանտ | 033-33-80-83 |
| | «Գորիսի պրոֆ. Խ. Երիցյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» | Համլետ Սարգսի Բաբաջանյան | Գյուղատնտեսության մեքենայացման մասնա-գիտական և տեխնիկական առարկաների ու մոդուլների ամբիոնի վարիչ, նույն ամբիոնի դասախոս | 077-27-06-70 |
| | «Գորիսի պրոֆ. Խ. Երիցյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» | փոխարինող՝ Սեյրան Մարտունի Հովհաննիսյան | Գյուղատնտեսության մեքենայացման մասնա-գիտական և տեխնիկական առարկաների ու մոդուլների ամբիոնի դասախոս | 094-02-26-97 |
| Գեղարքունիքի մարզ | Սևանի ՀՔԲ | Կարեն Գրիշայի Պետրոսյան | Սևանի ՀՔԲ ավագ տեսուչ, ոստ.մայոր | 094-21-41-45 |
| | | փոխարինող՝ Էդգար Աշոտի Ղալեչյան | Սևանի ՀՔԲ տեսուչ, ոստ.կապիտան | 077-76-55-66 |
| | «Սևանի բազմագործառութային պետական քոլեջ» | Գևորգ Սերյոժայի Ստեփանյան | Արտադրական ուսուցման վարպետ | 091-34-58-49 |
| | «Գեղարքունիքի տարածաշրջանային պետական քոլեջ» | փոխարինող՝ Խաչիկ Վարշամի Սարգսյան | Արտադրական ուսուցման վարպետ | 094-26-00-56 |
| | Մարտունու ՀՔԽ | Արկադի Սաշիկի Պողոսյան | Մարտունու ՀՔԽ տեսուչ, ոստ.կապիտան | 093-34-40-00 |
| | | փոխարինող՝ Արսեն Վահանի Ավետիսյան | Մարտունու ՀՔԽ տեսուչ, ոստ.մայոր | 093-62-08-20 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | «Գեղարքունիքի տարածաշրջանային պետական քոլեջ» | Խաչիկ Վարշամի Սարգսյան | Արտադրական ուսուցման վարպետ | 094-26-00-56 |
| | «Սևանի բազմագործառութային պետական քոլեջ» | փոխարինող՝ Գևորգ Սերյոժայի Ստեփանյան | Արտադրական ուսուցման վարպետ | 091-34-58-49 |
| Տավուշի մարզ | Իջևանի ՀՔԲ | Արայիկ Սերոժի Օթարյան | Իջևանի ՀՔԲ ավագ տեսուչ, ոստ.կապիտան | 093-70-80-78 |
| | | փոխարինող՝ Էրիկ Աշոտի Դավթյան | Իջևանի ՀՔԲ տեսուչ, ոստ.ավագ լեյտենանտ | 077-01-16-00 |
| | «Նոյեմբերյանի պետական քոլեջ» | Զոհրաբ Վերանի Զուրաբյան | Արտադրական ուսուցման վարպետ | 094-88-60-29 |
| | «Ալավերդու արհեստագործական պետական ուսումնարան» | փոխարինող՝ Կարո Կարլենի Սայադյան | Վարպետ | 094-64-22-07 |
| Վայոց Ձորի մարզ | Վայքի ՀՔԽ | Անդրանիկ Վարազդատի Ավետիսյան | Վայքի ՀՔԽ տեսուչ, ոստ.մայոր | 093-30-73-00 |
| | | փոխարինող՝ Տիգրան Սահակի Աբրոյան | Վայքի ՀՔԽ տեսուչ, ոստ.մայոր | 094-57-09-31 |
| | Հանրապետական N2 հատուկ կրթահամալիր | Ալեքսանդր Էդուարդի Գրիգորյան | «Տրակտորիստ-մեքենավար» մասնագիտության ուսուցիչ | 093-53-75-59 |
| | «Էջմիածնի արհեստագործական պետական ուսումնարան» | փոխարինող՝ Արամ Արսենի Ալիխանյան | Արտադրական ուսուցման վարպետ, մասնագիտական առարկաների ուսուցիչ | 055-31-68-18<br>077-31-68-18 |